ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/301

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, 03.11.2021թ. թիվ 26/26-1/17958-2021 գրությամբ «Ա. Հազեյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 27.10.2021թ. թիվ Ե/40/2849-21 գրության հիման վրա, 03.11.2021թ. թիվ 26/26-1/17958-2021 գրությամբ նախաձեռնել է «Ա. Հազեյան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ա. Հազեյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ա. Հազեյան» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/301 ընթացակարգի շրջանակներում 09.11.2021թ. ժամը 09:12-ին և 15.11.2021թ. ժամը 09:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 27.10.2021թ. թիվ Ե/40/2849-21 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար ՀԱԷԿ-ի N 3, 4 տուրբոգեներատորների օժանդակ համակարգերի արդիականացման համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-04/21» ծածկագրով գնման ընթացակարգի աճուրդի ամփոփման նիստում արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է և նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցել է նրան առկա անհամապատասխանությունների վերաբերյալ: Սահմանված ժամկետում «Ա. Հազեյան» ՍՊԸ-ի կողմից շտկումը կատարվել է մասամբ, որի հետևանքով նրա հայտը գնահատվել է հրավերի պահանջներին ոչ համապատասխան՝ անբավարար, և մերժվել է որոշման 42-րդ կետի համաձայն:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) պարբերության և որոշման 45-րդ կետի պահանջներով, Ձեզ ենք ներկայացնում մասնակցի տվյալները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով լինելով ՍՑ-ՆԳ-2021/301 ընթացակարգի շրջանակներում 09.11.2021թ. ժամը 09:12-ին և 15.11.2021թ. ժամը 09:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/301 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/301 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-04/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ա. Հազեյան» ՍՊԸ-ն:

2.Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության հայտում բացակայում էր հայտի ապահովումը, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, ինչպես նաև Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում) N 1 չափաբաժնում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերում ոչ ճիշտ էին լրացված ապրանքի մակնիշը, ապրանքային նշանը և ֆիրմային անվանումը:

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել կասեցնել նիստը և ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունները:

4. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից շտկումը իրականացվել է մասամբ, այն է՝ չի ներկայացվել հայտի ապահովումը, ինչպես նաև թերի է կատարվել տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունների շտկումը:

5. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի դրույթով, 27.10.2021թ. թիվ Ե/40/2849-21 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը:

6. Պատվիրատուի կողմից չի ներկայացվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 03.11.2021թ. թիվ 26/26-1/17958-2021 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 27.10.2021թ. թիվ Ε/40/2849-21 գրությունը և գործով առկա նյութերը հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին

մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ*** ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ***ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*** Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում ***պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով***, ***գրավոր ուղարկում է լիազորված մարմին***, որը դրանք ստանալուն

հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսպես, Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-04/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ա. Հազեյան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության հայտում բացակայում էր հայտի ապահովումը, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը, ինչպես նաև Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում) N 1 չափաբաժնում առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերում ոչ ճիշտ էին լրացված ապրանքի մակնիշը, ապրանքային նշանը և ֆիրմային անվանումը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել կասեցնել նիստը և ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով շտկել անհամապատասխանությունները:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից շտկումը իրականացվել է մասամբ, այն է՝ չի ներկայացվել հայտի ապահովումը, ինչպես նաև թերի է կատարվել տեխնիկական բնութագրում առկա անհամապատասխանությունների շտկումը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի դրույթով, 27.10.2021թ. թիվ Ե/40/2849-21 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրությունը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործով առկա նյութերը, արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից չի ներկայացվել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը՝ Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ Ընկերությանը էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցումը, որով կփաստվեր գնահատող հանձնաժողովի

կողմից արձանագրված անհամապատասխանությունների մանրամասն նկարագրված լինելը:

Մինչդեռ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացներ Ընկերության տվյալները՝ **համապատասխան հիմքերով**: Տվյալ դեպքում որպես հիմք հանդիսանում է Ընկերությանը՝ Կարգի և Ընթացակարգի հրավերի համապատասխան գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ուղարկվող ծանուցմամբ Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ մանրամասն նկարագրված լինելը, քանի որ արձանագրված անհամապատասխանությունների մանրամասն նկարագրման պայմաններում է հնարավոր փաստել արդյո՞ք Ընկերության համար հասկանալի է եղել ինչ շտկումներ պետք է իրականացվի, որը և չիրականացվելու դեպքում գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 42-րդ կետի դրույթով, մերժում է մասնակցի հայտը, որի արդյունքում ի հայտ է գալիս Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Նշվածի արդյունքում արձանագրում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման նպատակով Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանության շտկման վերաբերյալ Ընկերությանը էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցումը չներկայացնելու հետևանքով վիճելի է մնացել արձանագրված անհամապատասխանությունների մանրամասն նկարագրված լինելու փաստը:

Վերոգրյալի արդյունքում գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ա. Հազեյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 03.11.2021թ. թիվ 26/26-1/17958-2021 գրությամբ «Ա. Հազեյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**